Ինտենսիվության փոփոխման արդյունավետությունը

Ինտենսիվության փոփոխման արդյունավետությունը ստուգելու համար անհրաժեշտ է ընդգրկել հասույթի և ծախքերի բոլոր փոփոխությունները:

Այսպես՝ Արտադրատնտեսական փոփոխությունը արդյունավետ է, եթե հասույթի հավելաճը (սահմ. հասույթ) գերազանցում է (կամ հավասար) ծախքերի հավելաճին:

Որպես կանոն, բոլոր սահմանային հասույթներն ու ծախքերը երևելի են ՀԾՓԳ հաշվարկից, քանի որ արտադրատնտեսական միջոցառումների հետևանքով հաստատուն ծախքերի փոփոխություն տեղի չի ունեցել:

Քանի դեռ

- շրջանառու միջոցների,
- արտադրության աշխատաժամանակի,
- հողի,
- արտադրության և մատակարարման իրավունքի

պահանջը փոփոխվում է (ինչը նույնպես երևում է ՀԾՓԳ-ից), պետք է ստուգել, արդյոք անհրաժեշտ այդ փոփոխությունները կառաջացնեն լրացուցիչ ծախքեր, թե տեղի կունենա նրանց խնայողություն:

Օրինակում արտադրության միջոցների ավելացված քանակի շնորհիվ (գնովի-սերմացու, պարարտանյութեր, բույսերի պաշտպանության միջոցներ) ստացվում է 10 g լրացուցիչ բերք:

Հասույթի հավելաճը կազմում է՝		Սննդ.ցորեն	Կերային ցորեն	Ընդամենը
Բերքի հավելաճ	g	2	2	4
× Գին	դրամ/g	10.000	9.000	9.500
= Հասույթի հավելաճ	դրամ/h	20.000	18.000	38.000

Ծախքերի հավելաճը որոշվում է նյութերի և ծառայությունների համար անհրաժեշտ ծախքերի փոփոխությունից, ինչպես նաև լրացուցիչ շրջանառու միջոցների և աշխատանքի ծախքերից:

Տվյալ օրինակում գործոնների այլ փոփոխություններ նախատեսված չեն:

Գործոնների ծախքերի համար օգտագործվում են սեփական և փոխառու միջոցներ՝

- Շրջ.միջոցներ ծախքեր 20% վարձու * 15,0% + 80% սեփական * 8,0%
- Աշխատանքի ծախքեր 0% վարձու ԱՈՒ * 400,00դրամ + 100% ընտան.ԱՈՒ * 300,00դրա

	Ինտենսիվութ. I	Ինտենսիվութ. II	Գործ.քան. փոփոխութ.	×	Ծախքեր	Ծախքերի աճ հա	Ծախքերի աճ g
Փոփոխակ.ծախքեր(ՀԾՓԳ-ի	187.918	194.518				6.600	660
Շրջան. միջոցներ* (դրամ)	*112.751*	*116.711*	*+ 3.960,0*	×	9,4%	372	37
Աշխատանք (մ/ժամ)	*50,0*	*53,5*	*+ 3,5*	×	300,00	1.050	105
					Ընդհանուր ծախքերի աճ	8.022	802

Զեռնարկատիրոջ շահույթի հավելաճ	հա	g
Հասույթի հավելաճի և	38000 դրամ/հա	9.500 դրամ/g
ծախքերի հավելաճի տարբերությունից	8.022 դրամ/հա	802 դրամ/g
ստացվում է ձեռնարկատիրոջ շահույթի աճը	29.978 դրամ/հա	8.698 դրամ/g

Մեկնաբանում

Ներկայացված ինտենսիվության փոփոխությունը արդյունավետ է, քանի որ՝

- ապրանքի գին/g > լրացուցիչ բերքի ծախքերի հավելաճ/g	9.500	>	802
- հասույթի հավելաճ/հա > ծախքերի հավելաճ/հա	38.000	>	8.022
- շահույթի հավելաճ > 0	29.978	>	0

Եթե համեմատել հասույթի և ծախքերի հավելաճի հաշվարկները, ապա կարելի է ստանալ նաև ձեռնարկված միջոցառման ձեռնարկատիրոջ շահույթի հավելաճը՝

	Ինտենսիվութ. I	Ինտենսիվութ. II	գործ.քան. փոփոխութ.	×	Ծախ-քեր	Հասույթի աճ /Ծախքերի աճ
ՀԾՓԳ	162.082	193.482				+ 31.400
Շրջան.միջոցներ (դրամ)	*112.751*	*116.711*	*+ 3.960,0*	×	9,4%	– 372
Աշխատանք (մ/ժամ)	*50,0*	*53,5*	*+ 3,5*	×	300	– 1.050
Ձեռնարկատիրոջ շահույթի հավելաճ						+ 29.978

Հաշվարկը վերահսկելու համար պետք է ևս մեկ անգամ երկու ինտենսիվությունների համար ներկայացնել ձեռնարկատիրոջ շահույթի որոշման ընթացքը (ինչպես Աղյուսակ 2-ում)՝

	Մասնաբաժին	Ծախքեր		Ինտ. I	Ինտ. II	ՀԾՓԳ-աճ / շահույթի աճ
Հասույթ (արտադր. + ուղեկցող արտ. հասույթ և սուբսիդիաներ				350.000	388.000	
– Համեմատական փոփոխական ծախքեր (նյութեր &ծառ-ներ)				187.918	194.518	
= ՀԾՓԳ (ըստ գործնական եղանակի)				162.082	193.482	+ 31.400
Շրջանառու միջոցների պահանջ			*դրամ*	*112.751*	*116.711*	
– Սեփ.կապիտալի տոկոսադրույք	80%	8,0%		7.216	7.469	
– Փոխռ. կապիտալի տոկոսադրույք	20%	15,0%		3.383	3.501	
= ՀԾՓԳ I				151.483	182.511	+ 31.028
Աշխատաժամանակի պահանջ (արդյունավետ)			*ԱՈՒժ*	*50*	*54*	
– Ընտան.ԱՈՒժերի դրույք	100%	300	դրամ/մ/օ	15.000	16.050	
– Աշխատավարձ վարձու ԱՈՒժեր	0%	400	դրամ/մ/օ	0	0	
= ՀԾՓԳ II				136.483	166.461	+ 29.978
Օգտակար հող			*հա*	*1*	*1*	
– Սեփ.հողերի այլընտր.	60%	50000	դրամ/հա	30.000	30.000	
– վարձ. հողեր վարձավճար	40%	60000	դրամ/հա	24.000	24.000	
– Այլ այլընտրանքային ծախքեր				0	0	
= ՀԾՓԳ III				82.483	112.461	+ 29.978
– Հաստատուն և ընդհանրական (վերադիր) ծախքեր				88.715	88.715	
= Ձեռնարկատիրոջ շահույթ				-6.232	23.746	+ 29.978

Կրկնահաշվարկը ցույց է տալիս, որ շրջանառու միջոցների և աշխատավարձի հաշվի առնված դրույքաչափի դեպքում շահույթի հավելաճը ձեռք է բերում իր վերջնական արժեքը:

Չնայած բերքատվության բարձրացումը արդյունավետ է, այնուամենայնիվ այն բավարար չէ՝ ձեռնարկատիրոջ շահույթը ամբողջությամբ դրական մակարդակին հասցնելու: Այդ պատճառով 2-րդ ինտենսիվության դեպքում օգտագործվող գործոնները երկարաժամկետ չեն հատուցվում: